



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 20/78 «05» 02 2019

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ/ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ. օգոստոսի 25-ի թիվ 1240-Ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության մասին» կարգի պահանջները և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. Սահմանել, որ

ա) Երևանի պետական համալսարանի բակալավրիատ ուսանողի տեղափոխությունն իրականացվում է 1-ին կուրսն ավարտելուց հետո (առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսում՝ 60 կրեդիտ, հեռակա ուսուցման համակարգի 1-ին կուրսում՝ 48 կրեդիտ հավաքելու դեպքում), իսկ ԵՊՀ մագիստրատուրա ուսանողի տեղափոխությունն իրականացվում է 1-ին կուրսի 1-ին կիսամյակն ավարտելուց հետո (առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսի 1-ին կիսամյակում՝ 30 կրեդիտ, հեռակա ուսուցման համակարգի 1-ին կուրսի 1-ին կիսամյակում՝ 24 կրեդիտ հավաքելու դեպքում): Ավարտական կուրսում տեղափոխությունն արգելվում է:

բ) Տեղափոխության/ ուսանողական իրավունքների վերականգնման մասին ուսանողի դիմումն ընդունվում է տվյալ կիսամյակի ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթների ընթացքում առկա ուսուցման համակարգի դեպքում, իսկ նախորդող 3 շաբաթների ընթացքում՝ հեռակա ուսուցման համակարգի դեպքում:

գ) Դիմումը ստանալուց հետո ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության կազմակերպչական բաժինը 5-օրյա ժամկետում հաշվարկում է առարկայական տարբերությունները: Տարբերությունների թույլատրելի քանակի դեպքում (մինչև 20 կրեդիտ) հաշվապահությունը 3-օրյա ժամկետում հաշվարկում է վճարման ենթակա գումարը, որից հետո՝ սովորողը՝ 3-օրյա ժամկետում պարտավոր է վճարել առարկայական տարբերությունների համար նախատեսված գումարը (յուրաքանչյուր մոդուլը՝ 10.000 ՀՀ դրամ հաշվարկով): Վճարումը կատարելուց հետո 3-օրյա ժամկետում տրվում է դասերին թույլատրելու և առարկայական տարբերությունները հանձնելու մասին հրաման (կցագրման հրաման):

դ) Հրամանը ստանալուց հետո ֆակուլտետի ղեկանատը կազմում և կազմակերպչական բաժին է ներկայացնում առարկայական տարբերությունների հանձնման հանձնաժողովների կազմը և ժամանակացույցը՝ սահմանելով վերջնական ժամկետ՝ 1-ին կիսամյակում՝ առկա ուսուցման համակարգի դեպքում՝ նոյեմբերի 1-15-ը (1 վերահանձնման հնարավորությունը՝ դեկտեմբերի 1-10-ը), հեռակա ուսուցման համակարգի դեպքում՝ դեկտեմբերի 1-15-ը (1 վերահանձնման հնարավորությունը՝ հունվարի 8-18-ը): 2-րդ կիսամյակում՝ առկա և հեռակա ուսուցման համակարգերի դեպքում՝ ապրիլի 1-15-ը (1 վերահանձնման հնարավորությունը՝ մայիսի 1-15-ը):

Առարկայական տարբերությունները հանձնելուց հետո ֆակուլտետը 3-օրյա ժամկետում կազմակերպչական բաժին է ներկայացնում տարբերությունների հանձնման վերաբերյալ ամփոփումը:

ե) Առարկայական տարբերությունները նախատեսված ժամկետում հանձնած ուսանողը պարտավոր է 5-օրյա ժամկետում վճարել տվյալ կիսամյակի համար նախատեսված ուսման վարձավճարը, որից հետո տրվում է տեղափոխման/ ուսանողական իրավունքների վերականգնման հրաման:

զ) Առարկայական տարբերությունները նախատեսված ժամկետում չհանձնած ուսանողի կցագրման հրամանը ճանաչվում է անվավեր:

2. Սույն հրամանի մասին իրազեկել ուսանողներին և աշխատողներին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի 2019թ. սեպտեմբերի 20-ի թիվ 173/1 հրամանը:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏՈՐ

Գ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ